ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ՔՀՆ. ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

(փիլիսոփայական-աստվածաբանական դիտարկումներ)

Քրիստոնեական վախճանաբանությունը Մեսիայի երկրորդ գալստյան, աշխարհի վախճանի, ժամանակների վերջի եւ հավիտենության վերաբերյալ վարդապետություններով հիմնվում է աստվածաշնչյան հիմնարար հաստատումների վրա, որոնցից է Պետրոս առաքյալի Բ թղթի 3.18-ի փառաբանությունը. «Աճեցե՛ք մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի շնորհով եւ գիտությամբ: Նրան փա՛ռք թե՛ այժմ եւ թե՛ մինչեւ հավիտենության օրը: Ամեն»: Սուրբգրական այս հատվածում իր նշանակությամբ առանձնանում է հավիտենության օրը կապակցությունը, որի արտահայտած իմաստային շեշտադրումն առնչվում է հավիտենության վերաբերյալ քրիստոնեական ուսմունքին: Պետք է նշել, որ հավիտենության օրը (գրաբար՝ յօրն յաւիտենից) արտահայտությունը հանդիպում է Աստվածաշնչի հայերեն տարբերակներում, ինչպես նաեւ լատիներենում՝ in die aeternitatis, մինչդեռ այլալեզու տարբեր հրատարակություններում բացակայում է օր բառը[1], եւ խոսքի իմաստը ներկայացվում է հավիտենության համար (ֆր.- pour l'eternite, անգլ.- for ever) արտահայտությամբ: Ուշադրության է արժանի այն իրողությունը, որ օրը եւ հավիտենությունը հակադրություններ են, որովհետեւ մեր ընկալմամբ օրը սկիզբ եւ վերջ ունի, իսկ հավիտենությունն անվերջ է: Սակայն այս կապակցության մեջ օր բառը միանալով հավիտենություն բառին, պատկերում է մեկ եւ անվերջանալի, անմայրամուտ օր՝ պատկերացում տալով հավիտենության ժամանակային անսահմանության կամ վերժամանակյա իրականության մասին: Հետեւաբար, առավել ճիշտ է նորկտակարանյան այս դրվագում օր բառի գործածությունը: Կան այլալեզու թարգմանություններ, որոնցում՝ սույն հատվածում, պահպանված է օր բառը[2], եւ

1 Աստվածաշնչի King James Version-ի հրատարակությունները:

Bible, Good News Edition, today's English version, the Bible Societies.

La Saint Bible, traduite d'après les textes originaux hébreu et grec par Louis Segond, Docteur en théologie, édition revue avec références, Alliance Biblique Universelle.

La Bible, Ancien et Nouveau Testaments, avec les livres deutérocanoniques, traduite de l'hébreu et du grec en français courant, Alliance Biblique Universelle, Codiffuseurs pour la France, Le Cerf, 1990.

The new Jerusalem Bible, Doubleday & Company, INC. Garden City, New York.

2 The Holy Bible, revised standard version containing the Old and New Testaments, translated from the original tongues being the version set forth A.D. 1611, revised A.D. 1881-1885 and A.D. 1901, compared with the most ancient authorities and revised A.D. 1946-1952, reference edition with concise concordance, Thomas Nelson & Sons, New York.

անգամ գրվում են այդ բառին առնչվող համապատասխան մեկնություններ: Սուրբգրական այս դրվագում օրը կարող է ցույց տալ այն պահը, երբ սկսվում է հավիտենությունը, եւ կամ՝ հավիտենական օրը[3], որը վերջ չունի:

Օր բառը հավիտենության հասկացությունն արտահայտելու իմաստով հանդես է գալիս նաեւ Պետրոս առաքյալի թղթի նույն գլխի ավելի վաղ հիշատակվող համարում (3.8)՝ լինելով ազատ վկայակոչում Սաղմոսաց գրքից. «Տիրոջ համար մեկ օրը՝ ինչպես հազար տարի է, եւ հազար տարին՝ մեկ օր» (ՁԹ 4)[4]: Այս նախադասությունը պատասխանն էր հավատացյալների հարցին, թե ինչու չի իրականանում Տիրոջ երկրորդ գալստյան խոստումը (Ա Թեսաղ. Դ 14, Յակ. Ե 7-8): Առաքյալը ներկայացնում է հիմնական փաստարկը՝ Աստծո համար ժամանակի հարաբերական լինելը[5]: Աստծո համար ժամանակային չափումն այլ է, քան մարդկայինը: Սա առավել հասկանալի դարձնելու համար թղթի հեղինակը փոխում է սաղմոսի տեքստի շեշտադրումը եւ վկայակոչումը բերում ոչ թե ուղղակի, այլ ազատորեն գործածված՝ հակադրություն ստեղծելու համար: Սաղմոսը հաստատում է Աստծո հավիտենության եւ մարդկային կյանքի կարճատեւության հակադրությունը (ՁԹ 4-6), Օգոստինոսը եւս բերում է առաքելական թղթից եւ սաղմոսից այս վկայակոչումը՝ Աստծո հավիտենության մասին խոսելիս[6]: Մինչդեռ առաքյալը հակադրում է ժամանակի՝ մեր եւ աստվածային ընկալումները: Այն ինչ մեզ համար անվերջանալիորեն երկար է՝ հազար տարին, կամ շատ կարճ՝ մեկ օր, կարող է Աստծո համար ընկալված լինել բոլորովին այլ կերպ, ինչպես, օրինակ, հավասարություն: Այսպիսով, ժամանակագրական ընկալումը պետք է լրջորեն հարաբերական նկատել: Դան օրեր, որոնք իրենց արժեքի, ինտենսիվության մեջ Աստծո համար կարող են ավելի կարեւոր լինել, քան հազար տարին, ինչը վերաբերում է հատկապես Քրիստոսի կարճ կյանքին եւ մանավանդ դրա որոշ օրերին: Ընդհակառակը, երկար ժամանակաշրջաններ, որոնք թվում է՝ անվերջանալիորեն երկար են, Աստծո համար կարող են ավելի կարճ լինել, քան մարդու կարճատեւ մեկ օրը: Հետեւաբար, վախճանաբանական ժամանակայնությունը պետք է հարաբերականացված լինի. Տերը չի գալիս ոչ թե նրա համար, որ մոռացել է Իր խոստումը, այլ պարզապես ժամանակի Նրա չափումը տարբեր է մեր ընկալումից: Բ Պետ. Գ 8-ի ժամանակային շեշտադրումով սաղմոսի ՁԹ 4-ը հավասարապես մեջբերվում է քրիստոնեական կամ հրեական այլ տեքստերում, հաճախ գործածվում է ռաբբիական կամ հայտնութեանական գրականության մեջ՝ լուծելու ինչպես արարչագործության օրերի, այնպես էլ մեսիական ժամանակների եւ ժամանակների վախճանի վերաբերյալ հարցերը: Սա նաեւ ծառայում է հիմնելու վարդապետությունը 6000 տարվա տեւողություն ունեցող տիեզերքի վերաբերյալ, որին պիտի հետեւի Տիրոջ 1000 տարին (Յայտն. Ի 4)[7]:

Traduction Œcuménique de la Bible, édition intégrale, Nouveau Testament, 253e mille, 1984, les éditions du Cerf, 29 Bd Latour-Moubourg, Paris VII.

3 Commentaire du Nouveau Testament, deuxième série, XIII b, Eric Fuchs, Pierre Reymond, La Deuxième épitre de Saint Pierre, L'épitre de Saint Jude, 2e édition corrigée et augmentée, Labor et Fides, Genève, p. 127.

4 Այլալեզու հրատարակություններում, ի տարբերություն հայերենի, գլուխների դասավորությունն այլ է, եւ հիշյալ նախադասությունը Դ գլխի 4-րդ համարում է:

5 Համար 9-ում նշվում է նաեւ երկրորդ փաստարկը՝ Աստծո համբերատարությունը:

6 Տե՛ս **Օգոստինոս Երանելի**, Խոստովանություններ, թարգմանությունը լատիներենից՝ անգլերեն թարգմանության համեմատությամբ՝ Խաչիկ Գրիգորյանի, Անկյունաքար, Երեւան, 2002, էջ 224:

7 Commentaire du Nouveau Testament, pp. 114-115. Ըստ Հայտնության գրքի՝ սատանան, պարտություն կրելով,

Մինչեւ հավիտենության օրը (εἰς ἡμέραν αἰῶνος) առաքյալի թղթի Գ 18-ի արտահայտությունը Նոր Կտակարանում այս ձեւով հանդիպում է միայն այստեղ: αἰῶνος բառի առնչությամբ պետք է նշել, որ հավիտենական կյանք արտահայտության համար հունարեն Նոր Կտակարանն օգտագործում է *zon aionios* արտահայտությունը: *Aionios* ածականը ծագում է *aion* գոյականից, որը, համաձայն կոնտեքստի, թարգմանվում է դար, սերունդ կամ դարաշրջան: *Aionios* նշանակում է «դար տեւող», «անորոշակիորեն երկար ժամանակ տեւող»: Հետաքրքրական է, որ αἰῶνος բառին հատկապես երկնային հավիտենականության իմաստավորում տվեց Հիսուս Քրիստոս Մատթեոսի Ավետարանի ԺԲ 32-ում՝ խոսելով Սուրբ Հոգու դեմ հայհոյանքը ո՛չ այս աշխարհում եւ ո՛չ էլ հանդերձյալում չներվելու մասին [οὔτε ἐν τούτῳ τῷ αἰῶνι οὔτε ἐν τῷ μέλλοντι]: Այստեղ Քրիստոս շեշտում է երկու «ժամանակաշրջաններ»՝ ներկա, բայց անցնող *aion*-ը եւ գալիք *aion*-ը, որն Աստված բացելու է մարդկության առջեւ[8]: Հավիտենություն հասկացությունը, ըստ խոշոր լեզվաբան Էմիլ Բենվենիստի, հնդեւրոպական լեզվում ամրագրված չէր իր վերացական առանձնահատկությամբ, եւ դրա արտահայտման համար գործածվում էին բառեր հասակ, մեծ տեւողություն նշանակությամբ : Հունարեն aiōn բառը (լատ. aeternus) ժամանակային իմաստ է ձեռք բերել, քանի որ այն նշանակում էր մարդու կենսական ուժը, նրա կյանքի աղբյուրը, որը որոշում է վերջինիս երկարատեւությունը: Դա ոչ թե մշտատեւ եւ անշարժ հավիտենություն է, այլ հավիտենություն, որն անընդհատ նորոգվում է, որն արտահայտվում է Հոմերոսի մոտ aei [ἀεί-հավիտյան] մակբայի օգտագործմամբ[9]: Սեմական լեզուներում ʾlm արմատը նշանակում է նախ հավիտենություն, եւ երկրորդ՝ աշխարհ՝ ժամանակակից հասարակության իմաստով: (Եբրայերեն *olam* բառը նշանակում է կյանք, լինելիություն եւ աստվածաշնչյան թարգմանության մեջ այն համարժեք է հունարեն *aion* բառին): Հունարենում դա արտացոլվում է ավետարանների այնպիսի արտահայտություններում, ինչպես ho aiōn hoytos - век сей, ho mellōn aiōn - грядущий век[10]: Այսպիսով, Մատթեոսի Ավետարանի նշյալ համարի ոչ այս աշխարհում եւ ոչ էլ հանդերձյալում հայերեն խոսքերն առավելաբար իմաստային թարգմանություն են, ընդ որում պետք է նկատի ունենալ, որ հանդերձյալում-ը հանդես է գալիս զեղչումով, այսինքն՝ հանդերձյալ աշխարհում (իմաստային) կամ հանդերձյալ, գալիք «ժամանակաշրջանում»:

Հավիտենության առնչությամբ ժամանակաշրջան կամ անվերջանալի ժամանակ արտահայտությունները կարող են սխալ լինել: Եկեղեցական հեղինակները տարբեր

կապվեց ու ներվեց անդունդը հազար տարով (Ի 2): Այդ հազար տարին խորհրդանշական է համարվում, եւ հազարամյայի թագավորության շրջան (Ի 6) է նկատվում Քրիստոսի խաչելությունից ու Հարությունից, որով եւ՝ սատանայի ու մեղքի պարտությունից հետո ընկած ժամանակաշրջանը, քանզի Փրկչի զոհագործությամբ չարը պարտվեց եւ անմիջական իշխանություն, ազդեցություն չունի քրիստոնյայի վրա: Ի Քրիստոս հավատքի զորության առջեւ անզոր է չարի իշխանությունը : Բողոքական վարդապետությունը տարբեր է, որի համաձայն Տիրոջ Երկրորդ գալուստով կամ անմիջապես դրանից առաջ պիտի լինի Քրիստոսի հազարամյա թագավորությունը եւ ապա՝ աշխարհի վախճանը:

8 The resurrection of Man, Christian teaching on life after death, Michael Perry, Archdeacon of Durham, Mowbrays London և Oxford, pp. 108-109.

9 **А. Ф. Лосев**, Античная философия истории, первое полное исправленное издание, Санкт-Петербург, 2001, ст. 218-220. * **Benveniste E.,** Expression indo-europnenne de l'«pternitn». «Bulletin de la Socintn de linguistique de Paris», t. 38, fasc. 1. Paris, 1937, pp. 107-110.

10 **А. Ф. Лосев,** նշվ. աշխ, էջ 220: * **Benveniste E.,** նշվ. աշխ, էջ 110:

կերպ են անդրադարձել հավիտենության եւ ժամանակի հարաբերության խնդրին: Ըստ Սուրբ Գրիգոր Տաթեւացու՝ «ժամանակն ի յաւիտեանն պարագրի»[11]: Տաթեւացին տարբերություն է դնում հավիտենականի եւ մշտնջենավորի միջեւ՝ շեշտելով, որ ի տարբերություն հավիտենականի, որ անսկիզբ եւ անվախճան իրողությանն է վերաբերում[12], մշտնջենավորի իմաստի տակ կարող ենք հասկանալ ոչ միայն անսկիզբն ու անվախճանը, այլեւ սկզբնավորյալն ու անվախճանը: Մեր հոգիներն ու հրեշտակները հավիտենական են ասվում, որովհետեւ ժամանակի ներքո չեն, այլ՝ հավիտյանի, բայց նաեւ մշտնջենավոր են ասվում, որովհետեւ ունեն սկիզբ, բայց ոչ վախճան[13]: Հավիտենականի մեջ Տաթեւացին տարբերակում է հավիտյանը եւ դրա չորս տեսակները՝ 1. անսկիզբ եւ անվերջ, 2. անսկիզբ, բայց վերջավոր, 3. սկզբնավոր, բայց անվերջ, 4. սկզբնավոր եւ վերջավոր: Հավիտյանի այս չորս տեսակները հանդես են գալիս նաեւ այլ անուններով՝ հարաճգական հավիտյան, սկզբնական հավիտյան, միշտ հավիտյան եւ ժամանակավոր հավիտյան: Սուրբ Գրիգոր Տաթեւացու դիտարկումները տեղին են, որովհետեւ Աստվածաշնչում այս տարբեր իմաստավորումներով են գործածված հավիտենական եւ հավիտյան բառերը: Ժամանակավոր հավիտյան արտահայտության պարագային Տաթեւացին նշում է հավիտյան բառի դարի կամ դարաշրջանի իմաստով հանդես գալու իրողությունը, ինչպես որ Մովսեսի օրենքի մասին է ասվում «հավիտենական օրենք»[14] (տե՛ս՝ Ելից. ԺԲ 14, 17, 24, ԻԷ 21, ԻԸ 43, ԻԹ 28, Լ 21): Այս բացատրությունը նույնանում է հունարեն *aion* բառի վերոնշյալ իմաստային պարզաբանման հետ: Ի դեպ, պետք է նշել, որ հավիտյան եւ ժամանակ բառերը միասին գործածված են Ելից ԺԴ 13-ում յաւիտեանս ժամանակաց, որի արեւելահայերեն թարգմանության մեջ դուրս է հանված ժամանակ բառը եւ գործածված է հար հավիտյան արտահայտությունը: Տաթեւացին նաեւ հավիտյանի համեմատությամբ ներկայացնում է միշտ եւ ժամանակ հասկացությունները: Ի տարբերություն հավիտյանի՝ միշտն այն է, որ ունի սկիզբ, բայց անվախճան է, իսկ ժամանակն ունի սկիզբ եւ վախճան: Հավիտյանը պարունակում է միշտը, միշտը՝ ժամանակը, իսկ ժամանակն այս երկուսից էլ պարունակվում է: Հավիտյանն ու միշտը մասերից բացկացած չեն, իսկ ժամանակն ունի երեք մաս՝ ներկա, անցյալ եւ ապագա: Հավիտենական է Աստված, որ սկիզբ եւ վերջ չունի, մշտնջենավոր են հրեշտակները, որ ունեն սկիզբ, բայց վերջ չունեն, ժամանակավոր են մարդիկ: Ժամանակը երկնքի ներքո է, միշտը երկնքից վեր, իսկ հավիտյանը առավել վեր ողջ երկնքից[15]: Տաթեւացու այս դիտարկումները բավականին իմաստալի են, սակայն հետագա քննարկումներում կտեսնենք, թե որքան ճշգրիտ են հավիտենության ժամանակային բովանդակության վերաբերյալ եկեղեցական այս հեղինակի արտահայտած մտքերը:

Սպինոզայի եւ Թոմմա Աքվինացու տեսակետների համաձայն հավիտենությունը վեր է ժամանակից եւ Աստծո համար ապառնի ոչինչ չկա[16]: Թոմմա Աքվինացին ընդգծում է, որ

11 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 114, 116:

12 Քրիստոս անսկիզբ եւ անվախճան է անվանվում Հայտնության գրքում (2.8):

13 «Գիրք Հարցմանց», էջ 114, 116:

14 Տե՛ս անդ, էջ 115:

15 Տե՛ս անդ, էջ 116:

16 **Isabelle Mourral,** Agrégée de philosophie, inspecteur général honoraire de l'Education Nationale, Louis Millet, agrégée de philosophie, docteur ès-lettres, professeur émérite à l'Université des sciences sociales de Grenoble, Petit Encyclopédie Philosophique, nouvelle édition, Edition Universitaire, p.110.

հավիտենությունը չպետք է հասկացվի փեռողության ձեռով[17]: Օգոստինոսը ժամանակի մեջ գլխավոր է համարում ներկա պահը, որովհետեւ անցյալն ու ապառնին գոյություն չունեն, այլ ներկան ժամանակային շարժումով դառնում է անցյալ եւ գնում դեպի ապառնի[18]: Ըստ Օգոստինոսի՝ Աստծո հավիտենականությունն անդրանցնում է (transcends) ժամանակը: Օգոստինոսը դիմում է Աստծուն, որ ժամանակից դուրս է, հավիտենության մեջ[19]:

Ժամանակի եւ հավիտենության հոգեբանական ընկալումը - Հավիտենության մասին խորհելիս հարց է առաջանում՝ անվերջ ժամանակը հավիտենությո՞ւնն է, թե՞ հավիտենությունն այլ բան է, քան անվերջ ժամանակը: Մարդկային հոգեբանական, զգացողական ոլորտներում տարբեր են ժամանակի եւ հավիտենության մասին ընկալումները: Հին հունական փիլիսոփայության մեջ գերիշխում էր առասպելաբանական ժամանակի հասկացությունը, որով ժամանակը չէր տարբերակվում հավիտենությունից, տարածված էր ժամանակային անվերջանալիության պատկերացումը[20]: Արիստոտելը դատողություն անելով անսահմանի մասին՝ որպես սկիզբ եւ վերջ չունեցողի, բերում է մեկ այլ հույն փիլիսոփայի՝ Անաքսիմանդրի կարծիքը, ըստ որի՝ ժամանակն անվերջանալի է[21]: Դեմոկրիտն ապացուցում էր, որ ժամանակը չի ծագել, եւ համոզված էր, որ այն հավիտենական է[22]: Անտիկ մտածողության մեջ հետագայում առաջացավ ինքնուրույն ժամանակի՝ որպես ինքնուրույն ուժի մասին պատկերացումը[23]: Ատոմիստները՝ Դեմոկրիտի հետեւորդները, կամա թե ակամա պիտի ընդունեին նաեւ ժամանակի ատոմիզմը: Ըստ նրանց՝ եթե ժամանակը կազմված է ատոմներից, եւ դա չի զրկում նրան մշտատեւությունից, ուրեմն այդպիսին է նաեւ հավիտենությունը[24]: Ժամանակի եւ հավիտենության դիալեկտիկան, ինչպես դա հայտնի է անտիկ փիլիսոփայություն ուսումնասիրած բոլորին, տրված է Պլատոնի «Տիմեոս» աշխատության մեջ[25]: Արիստոտելի ժամանակի նկարագրությունը հարազատ է Պլատոնի «Տիմեոսին»[26]:

Արիստոտելը հսկայական ազդեցություն է թողել արեւմտյան փիլիսոփայության մեջ ժամանակի հասկացության վրա: Շատ նմանություններ կան Արիստոտելի եւ Հեգելի միջեւ: Դրա հետ մեկտեղ արմատական տարբերություն կա ժամանակի վերաբերյալ անտիկ փիլիսոփաների եւ նոր հեղինակների դատողություններում: Արիստոտելն իրերը դրեց ժամանակի մեջ, մինչդեռ նոր փիլիսոփայությունը, խոսքը վերաբերի Հեգելին, Մարքսին, Բերգսոնին, Հայդեգերին կամ Տեյար դը Շարդենին, ժամանակը ներմուծում են մարդու մեջ պատմության միջոցով, կամ առարկայի մեջ՝ էվոլյուցիայի միջոցով[27]: Անցյալ դարում հիմնավորապես հաստատվեց ժամանակի օբյեկտիվ եւ սուբյեկտիվ ընթացքների մասին

17 Տես անդ, էջ 109:
18 **Օգոստինոս Երանելի**, նշվ. աշխ., էջ 224-229 :
19 The resurrection of Man, pp. 110-111.
20 Տես **А. Ф. Лосев**, նշվ. աշխ., էջ 33, 39, 103, 104:
21 Տես անդ, էջ 100:
22 Տես անդ, էջ 104:
23 Տես անդ, էջ 115, 116:
24 Տես անդ, էջ 131:
25 Տես անդ, էջ 146. *(28a-29a, 29e-31b, 37c-47d, 47e-68a).
26 Տես անդ, էջ 177:
27 Տես անդ, էջ 172-173: ***Dubois J. M.**, Le temps et l'instant selon Aristote, Paris, 1967, p. 20-22.

տեսակետը[28]: Ֆրանսիացի մեծ փիլիսոփա Անրի Բերգսոնն իր աշխատություններում ուշադրություն է դարձրել ժամանակ հասկացությանը՝ առանձնացնելով ժամանակի երկու հիմնական տեսակ: Առաջինը գիտության ժամանակն է, որն օբյեկտիվ է, կախված չէ սուբյեկտից եւ իր հանդեպ արտաքին վերաբերմունքից, քանակական է, մեխանիկական, տարածական, չափելի: Երկրորդը հոգեբանական ժամանակն է, մարդկային հոգեվիճակի ժամանակային ընկալման յուրատեսակ չափում[29]: Մարդու ապրած ժամանակը հատուկ նշանակություն ունի. իրադարձություններով հարուստ ժամանակշրջանը մարդու հիշողության մեջ երկար է թվում, ուրախության պահերն արագ են անցնում, մինչդեռ ձանձրույթի ժամանակը երկար է թվում, եւ մարդը տանջանք է զգում, երբ չի կարող իմաստով լցնել ժամանակը: Այսպիսով, ժամանակը միայն ֆիզիկական եւ նյութական բանաձեւում չէ, այն սահմանվում է նաեւ հոգու կողմից[30]: Օբյեկտիվ եւ սուբյեկտիվ ժամանակների մասին Բերգսոնի տեսությունը մեծ ազդեցություն ունեցավ արվեստի, հատկապես ֆուտուրիզմի եւ կուբիզմի վրա, ստեղծվեց բերգսոնիզմ եզրը՝ ցույց տալու համար ժամանակային չափման մուտքը գեղանկարչական տարածություն: Գիտությունը, տարածականորեն դիտելով ժամանակը, աղավաղում է այն, այսինքն՝ գիտության մեջ հաշվի չի առնվում ժամանակի ընկալման հոգեբանական կողմը, մինչդեռ բոլորովին հանկարծակի գեղանկարչությունն ի վիճակի եղավ փոխելու այդ մոտեցումը տարածական պատկերների դեֆորմացիայի միջոցով՝ հորինելով կենդանի ժամանակի տեսողության տպավորությունը[31]: Բերգսոնի ժամանակ-տեւողություն հասկացությունը հաճախ բերվում է բացատրելու համար կուբիստների ոճը, որով քսաներորդ դարի առաջին տասնամյակներին հանդես եկան հայտնի նկարիչներ Պաբլո Պիկասոն եւ Ժորժ Բրակը: Չափերի կազմալուծման օգնությամբ կուբիստներն առարկան ցույց են տալիս մի քանի տեսանկյուններից, ժամանակի տարբեր կտրվածքներում, կարծես դիտողը պտտվում է դրա շուրջը[32]: Օբյեկտիվիստի տեսանկյունից ժամանակը հաջորդականություն է, շարժում ժամանակային ընթացքի մեջ: Այս տեսակետով էր հունական, արեւմտյան ավանդությունը հասկանում «արտաքին» ժամանակը: Ժամանակը չափվում է հիմա-ի ընթացքից եւ դառնում քանակական, չափելի, շարունակական: Այստեղ մարդը դրված է ժամանակի առջեւ եւ դառնում է նրա ստրուկը[33]:

Նույնիսկ ժամանակի այս երկու նոր ընկալումների դեպքում մարդկային միտքը փորձ է անում երկրային ժամանակային չափումներ ներմուծել հավիտենականին առնչվող հասկացություններում, որպիսիք ի հայտ են գալիս եկեղեցական արարողակարգերում: Սակայն ժամացույցի ընթացքը եւ օրացույցը պատկանում են մահվան այս կողմին, եւ իզուր է ջանալ պատկերացնել մյուս կյանքի պայմանները, որպես թե դրանք լինեն այս կյանքի պայմաններ[34]: Օրինակ՝ ննջեցյալի համար յոթնօրեքի կամ քառասնօրեքի կարգերը՝ կապված մարդկային հոգու երկնասլաց ընթացքի ժամանակաշրջանի հետ, պետք է

28 The resurrection of Man, p. 107.

29 **Убальдо Никола**, Иллюстрированный философский словарь, Москва, с. 428.

30 "Encyclopedia of Theology", The Coincise, Sacramentum Mundi, edited by Karl Rahner, Burns և Oates, p. 1716.

31 Տես **Убальдо Никола,** նշվ. աշխ., էջ 428:

32 Տես անդ, էջ 429:

33 Տես "Encyclopedia of Theology", The Coincise, Sacramentum Mundi, edited by Karl Rahner, Burns & Oates, էջ 1716:

34 The resurrection of Man, p. 107.

պայմանական նկատել՝ առնչված միայն յոթ կամ քառասուն թվերի խորհրդաբանությանը, քանզի իրականում այս աշխարհը լքածները դուրս են գալիս ժամանակային չափման երկրային համակարգից, եւ ժամանակային երկրավոր չափումը, որ պայմանավորված է հիմնականում Արեգակի շուրջը Երկիր մոլորակի պտույտով, նրանց համար այլեւս դադարում է գոյություն ունենալուց:

Տարբեր կարծիքներով ժամանակը տեւողության արտահայտությունն է: «Ժամանակը որոշակի տեւողություն է»,- ասում է Օգոստինոսը[35]: Սպինոզան եւս ժամանակը սերտորեն առնչում է տեւողության հետ: Տվյալ առարկայի տեւողությունը որոշելու համար մենք այն համեմատում ենք այնպիսի առարկաների տեւողության հետ, որոնք ունեն կայուն եւ որոշակի շարժում, եւ այդ համեմատությունը կոչվում է ժամանակ: Դրա համար ժամանակը միայն իրերի վիճակը չէ, այլ մտածողության մոդուս, մտավոր լինելություն: Ժամանակը մտածողության մոդուսն է, որ ծառայում է տեւողության բացատրության համար[36]: *Մոդուս* բառով Սպինոզան հասկանում է սուբստանցիայի վիճակը (Substantiae affectio), այլ բառերով՝ այն, ինչ գոյություն ունի ուրիշ բանի մեջ եւ ներկայանում է այդ ուրիշ բանի միջոցով[37]:

Համեմատելով Սպինոզայի եւ Բերգսոնի տեսակետները՝ կարող ենք ասել, որ եթե Բերգսոնն առանձնացնում է օբյեկտիվ ու սուբյեկտիվ ժամանակներ, կամ գիտության եւ հոգեբանության ժամանակներ, ապա Սպինոզան բերում է օբյեկտիվ ժամանակի սուբյեկտիվ ընկալման հասկացությունը: Կանտն իր փիլիսոփայությամբ ընդգծում է իրերի մասին զգացական պատկերացումները, որոնց առաջին հերթին վերաբերում են տարածությունը եւ ժամանակը[38]: Կանտի այս տեսակետին համապատասխան է Օգոստինոսի կարծիքը, թե մենք ժամանակը չափում ենք, երբ այն անցյալում է, քանի որ զգալով ենք չափում[39]: Հետաքրքրական է այն դիտարկումը, ըստ որի մեր ժամանակը ակնթարթ չէ, որ փոխարինելու է գնում մեկ այլ ակնթարթի, քանի որ այդ դեպքում մենք կունենայինք միայն ներկա, եւ հնարավոր չէր լինի անցյալի շարունակությունը ներկայի մեջ, չէր լինի զարգացում եւ որոշակի ժամանակ: Ժամանակը անցյալի անընդմեջ զարգացումն է, որ կլանում է ապագան[40]: Այս տեսակետի տրամաբանությամբ ոչ լիովին ճշտությամբ կարելի կլինի ասել, որ հավիտենության մեջ ոչ թե ժամանակը կանգ կառնի, այլ մեկ ակնթարթը կհետեւի մյուսին՝ առանց ձեւափոխումներ բերող զարգացումների ժամանակային հատկության, եւ կլինի հավիտենություն, քանի որ մարդկային գիտակցության մեջ հավիտենությունն ընկալվում է նաեւ որպես մշտական ներկա: Այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ հավիտենության մեջ իրադարձությունների

35 Տես **Օգոստինոս Երանելի**, նշվ. աշխ., էջ 232:

36 **Бенедикт Спиноза**, Избранные произведения, том первый (Приложение, содержащее метафизические мысли, в которых кратко объясняются более трудные вопросы, встречаемые как в общей, так и в специальной части метафизики, относительно сущего и его определений Бога и его атрибутов, а также человеческой души), Москва, 1957, с. 278-279.

37 Տես **Бенедикт Спиноза**, Избранные произведения, том первый, (Этика, доказанная в геометрическом порядке и разделенная на пять частей), Москва, 1957, էջ 361:

38 Классическая философская мысль, **Иммануил Кант**, Основы метафизики нравственности, (Пролегомены ко всякой будущей метафизике, могущей появиться как наука), Москва, 1999, с. 46.

39 Տես **Օգոստինոս Երանելի,** նշվ. աշխ., էջ 226:

40 Классическая философская мысль, **Анри Бергсон**, Творческая эволюция, Материя и память, Минск, 1999, с. 18.

հաջորդականությունը, որոնք ենթադրելի է, որ պիտի լինեն, քանզի հաջորդականությունը կապված է շարժման հետ, եւ եթե կա շարժում ու հաջորդականություն, ինչպե՞ս կարող է չլինել անցյալ կամ ապագա, այլ՝ մշտական ներկա, ժամանակային անվերջություն, կամ սոսկ անժամանակ լինելություն: Այս հարցերի պատասխանները կփորձենք տալ հետեւյալ դատողություններում:

Հավիտենություն եւ ասպվածաբանություն - Աստվածաբանական մարդաբանության մեջ մարդը հոգի է եւ մարմին, պատմական, գոյութենական էակ: Մարդու ներքին ժամանակը միշտ հեռացած է նրանից արտաքին ժամանակի մեջ, եւ նա, չնայած դրան, գտնում է իր ներքին ժամանակը միայն աշխարհի արտաքին ժամանակի մեջ: Արտաքին ժամանակը մարդկային ներքին ժամանակի գոյության հնարավորության պայմանն է: ժամանակի երկու առանձնահատկությունները՝ փուլային եւ գծային (linear) աստվածաբանորեն կարեւոր են[41]: Անտիկ աշխարհում եւս եղել է ներքին ժամանակի, ժամանակի սուբյեկտիվ ընկալման գաղափարը: Սոփեստական սուբյեկտիվիզմի համաձայն՝ ժամանակը մտքի եւ հավատի գործ է եւ ոչ թե էություն: Այս սոփեստական ժամանակը, որպես սուբյեկտիվ գաղափար, անկասկած, պետք է տարբերակել Հերակլիտի արտահայտած մտքից, ըստ որի՝ համաշխարհային կարգուկանոնն իր սկիզբն ունի ոչ թե ժամանակի, այլ մտքի մեջ, քանի որ Հերակլիտի Լոգոսը ունի օբյեկտիվ տիեզերական նշանակություն[42]:

Հետաքրքիր են ժամանակի եւ հավիտենության թեմային ուղղակիորեն անդրադարձած քսաներորդ դարի գերմանացի աստվածաբանների տեսակետները: Յուրգեն Մոլտմանն ընդունում է, որ տասնիներորդ դարում տեսականորեն վերահայտնագործվեց Աստվածաշնչի վախճանաբանական բնույթը: Սակայն վախճանաբանություն՝ էսխատոլոգիա, հասկացությունն արդի աստվածաբանության մեջ տատանվող եւ երկիմաստ է դարձել: Էսխատոլոգիա եզրով հասկանում են այն ապագան, որ անցնում է ներկայից այն կողմ, եւ այն՝ ինչ վերաբերում է ժամանակների վախճանին, նաեւ այն՝ ինչ անդրանցնում է (transcends) ժամանակը, նաեւ այն՝ ինչ աստվածաբանական հարաբերություն ունի վերջնական վախճանին, վերջնական իրականություններին[43]: Կարլ Բարտն ընդունում է, որ ժամանակը եւ ուրեմն ապագան գլխավոր դեր է խաղում Աստծո հետ մեր հարաբերություններում: Ավելին, նա այդ հարաբերություններն ընկալում է որպես վախճանաբանական: «Ժամանակների վախճանը, որի մասին խոսում է Պողոսը, անհրաժեշտաբար ժամանակների սկիզբն է»- ասում է Բարտը[44]: Հավանաբար նա այստեղ նկատի ունի ոչ երկրային, այլ չափումների ժամանակները, եթե կարելի է հավիտենության մասին արտահայտվել ժամանակներ բառով: Մոլտմանի համար Բարտը ոչ միայն չի կարողացել հասնել ճշմարիտ վախճանաբանությանը, այլեւ պատմությունը նրա ըմբռնմամբ աննշան, բոլորովին երկրորդական դեր ունի[45]: Պող

41 Տես "Encyclopedia of Theology", էջ 1718:

42 **А. Ф. Лосев**, նշվ. աշխ., էջ 105:

43 Recherches et synthèses, section d'œcuménisme, II, Herwig Arts, Docteur en sciences religieuses chargé de cours aux facultés universitaires Saint-Ignace à Anvers, Moltmann et Tillich, les fondement de l'espérance chrétienne, édition J. Duculot, S. A., Gembloux, p. 56.

44 Տես անդ, էջ 67:

45 Տես անդ:

Թիլիչի համար պատմության ոչ վախճանաբանական մեկանաբանությունը բացառված է ի սկզբանե[46]: Հույները երկու տարբեր բառերով էին արտահայտում ժամանակ հասկացությունը՝ ընդգծելով որակապես կարեւոր ժամանակը, որում առանձնահատուկ բան է պատահում, եւ քանակական ժամանակը: Kairos-ի գաղափարը [հուն. καιρός, իմաստը՝ ճիշտ կամ բարենպաստ պահ, գերագույն պահ] հակադրված է chronos-ին [հուն. χρόνος - ժամանակ, ժամանակակից հունարենում նաեւ՝ տարի], այսինքն՝ որակապես կարեւոր ժամանակի գաղափարը հակադրված է շարունակական ընթացքի քանակական ժամանակին[47]: Kairos-ը հավիտենականի մուտքն է ժամանակի մեջ: Հավիտենականը ցնցում է ժամանակը եւ վերափոխում այն[48]: Ժամանակի մեջ է, որ մարդ կարող է հայտնաբերել հավիտենականը. «Ժամանակը հայելի է, որի մեջ մենք տեսնում ենք հավիտենությունը»[49]: Մոլտմանը համարում է, որ կա երկու տեսակի քրիստոսաբանություն, որոնք երկուսն էլ սխալ են ընթանում: Առաջինն Աստծո գաղափարը փոխ է առել հունական մետաֆիզիկայից եւ Քրիստոսի մեջ տեսնում է հավիտենական էակի մարմնացումը: Երկրորդը մեկնում է մարդու տիեզերական հասկացությունից եւ համարում է, որ Քրիստոսի մեջ այդ էությունը կամ կատարյալ մարդու այդ գաղափարն է մարմնավորվել: Քրիստոսաբանական այս երկու ճանապարհները գնում են տիեզերականից դեպի մասնավորը եւ հավիտենականից դեպի պատմականը: Նրանք մոռանում են, որ աստվածաբանական ճշմարիտ ճանապարհը պետք է միշտ մեկնի պատմականից դեպի վախճանաբանականը, տիեզերականը[50]: Մոլտմանն ինքը հաստատում է կարեւոր տարբերությունը իր եւ Թիլիչի մտածողության մեջ հավիտենականի առնչությամբ: Նա ենթադրում է, որ Թիլիչը հունական միտումի փիլիսոփայությունն է փոխ առել: Հույների համար հավիտենականը հավասար էր անդրժամանակյայի (trans-temporel), այսինքն՝ հավիտենականությունը նրանց համար ժամանակի պարզ ժխտում է[51]:

Տպավորիչ են ԺԷ դարի փիլիսոփա Բենեդիկտ Սպինոզայի տեսակետները Աստծո առնչությամբ ժամանակի եւ հավիտենության վերաբերյալ: Աստծուն ոչ մի տեւողություն, երկարատեւություն հատուկ չէ: Ամենագլխավոր հատկանիշը, որ ամենից առաջ ենթակա է դիտարկման, Աստծո հավիտենությունն է, որով մենք արտահայտում ենք Նրա երկարատեւությունը, կամ ավելի շուտ Աստծուն հավիտենական ենք անվանում, որպեսզի Նրան ոչ մի տեւողություն չվերագրենք, քանի որ տեւողությունը գոյության վիճակ է եւ ոչ թե իրերի էության: Դրա համար մենք չենք կարող ոչ մի տեւողություն, տեւականություն վերագրել Աստծուն, որի գոյությունը Նրա Էությունից է: Ով դա անում է՝ առանձնացնում է Նրա գոյությունը Նրա էությունից: Սակայն ոմանք հարցնում են՝ Աստված հիմա ավելի երկար ժամանակ գոյություն չունի՞, քան այն ժամանակ, երբ ստեղծեց Ադամին: Սա ոմանց հիմք է տալիս Աստծուն տեւողություն վերագրելու, ինչը սխալ է, քանի որ այդ դեպքում ենթադրելի է, որ Աստծո էությունը տարբեր է Նրա գոյությունից: Տեւողության, հետեւաբար եւ ժամանակային հատկանիշների վերագրումը Աստծուն Սպինոզան սխալ է համարում՝

46 Recherches et synthΩses, section d'oecumnnisme, p. 110.
47 Տես անդ, էջ 113:
48 Տես անդ, էջ 114:
49 Անդ, էջ 134: * **P. Tillich**, The shaking of the foundations, London, 1949, p. 43
50 Տես անդ, էջ 149-150:
51 Տես անդ, էջ 154:

շեշտելով Աստծո գոյության եւ էության անբաժանելի լինելը, եւ բերում համեմատական բացատրություններ: Ոչոք չի պնդի, թե շրջանի կամ եռանկյունու էությունը, որ հավիտենական ճշմարտություն է, հիմա գոյություն ունի ավելի երկար, քան Ադամի ժամանակ: Ավելին, քանի որ ոմանք տեւականությունը պատկերացնում են ավելի երկար, քան կարճ, այսինքն՝ որպես թե կազմված մասերից, ապա ակնհայտ է, որ ոչ մի տեւողություն չի կարող վերագրված լինել Աստծուն, որովհետեւ Աստծո լինելությունը (бытие) հավիտենական է, եւ դրա մեջ չի կարող լինել ոչ ավելի վաղ, ոչ ուշ, ոչ առաջ եւ ոչ հետո: Աստծուն տեւողության վերագրումը մասերի է բաժանում բնությամբ անվերջանալին: Արարված իրերն ունեն տեւողություն, որովհետեւ դրանց գոյությունը դրանց էությունից չի բխում, մինչդեռ Աստծո գոյությունը եւ էությունը հենց Աստված Ինքն է: Այսպիսով, Աստծուն ոչ ոք չի կարող հաղորդել ապագա գոյություն, քանի որ Նրա գոյությունը բխում է Նրա էությունից[52]:

Ժամանակ եւ գիտություն - Գիտության մեջ ժամանակը համարվում է մատերիայի գոյության հիմնական ձեւ, օրինաչափորեն միմյանց հաջորդող երեւույթների մեջ կայացող, անքակտելիորեն կապված շարժվող մատերիային[53]: Մեր ժամանակային չափումն առնչվում է տիեզերաբանությանը. Արեգակի շուրջը Երկրի պտույտով է նաեւ հաշվվում ժամանակը: Չնայած Եւրոպայում քրիստոնեական դոգմատիզմի հակազդեցությանը՝ մեծ տարածում գտավ ԺՁ դարում Նիկոլաուս Կոպեռնիկոսի առաջարկած աշխարհի արեգակնակենտրոն համակարգը, հատկապես այն բանից հետո, երբ Գալիլեո Գալիլեյը ԺԷ դարի առաջին կեսին, աստղադիտական հետազոտությունների համար աստղադիտակ օգտագործելով, առաջին անգամ հայտնաբերեց փաստեր, որոնք անհամատեղելի էին Երկրի մասին նախկին պատկերացումներին: Դեռ դրանից առաջ կաթոլիկ հոգեւորական, փիլիսոփա, մաթեմատիկոս եւ աստղագետ Ջորդանո Բրունոն, որ իր հայացքների համար դատապարտվեց ինկվիզիցիայի խարույկի վրա այրվելու, իր ուսմունքով համապատասխան փիլիսոփայական ենթադրություն արեց տիեզերքի անսահմանության եւ դրանում որեւէ կենտրոնի բացակայության մասին: Այդ ենթադրությունը մեծ ազդեցություն ունեցավ տիեզերաբանության ողջ հետագա զարգացման վրա:

Տիեզերքում ժամանակային գոյությունը կապ ունի ձգողության հետ: Ձգողության եւ դրա բնույթի մասին առաջին արտահայտություններն արվել են անտիկ աշխարհում Պլուտարքոսի կողմից, որ գրել է. «Լուսինը քարի պես կընկներ Երկրի վրա, եթե ոչնչանար նրա թռիչքի ուժը»: ԺՁ-ԺԷ դարերում Եւրոպայում վերսկսվեցին մարմինների փոխադարձ ձգողությունն ապացուցելու փորձերը, այս բնագավառում հանդես եկող գիտնականներից էր Յոհաննես Կեպլերը: Սակայն տիեզերական ձգողության գիտական ապացույցը բերեց Իսահակ Նյուտոնը, որ 1685 թ. հայտնագործեց տիեզերական ձգողության օրենքը, որի վերջնական բանաձեւումն արտահայտեց 1687 թ. լույս տեսած «Բնափիլիսոփայության մաթեմատիկական հիմունքները» իր գլխավոր աշխատության մեջ[54]: Բայց 1916 թ. Ալբերտ

52 Տե՛ս **Бенедикт Спиноза,** Избранные произведения, том первый, (Приложение, содержащее метафизические мысли, в которых кратко объясняются более трудные вопросы, встречаемые как в общей, так и в специальной части метафизики, относительно сущего и его определений Бога и его атрибутов, а также человеческой души), Москва, 1957, էջ 285-286, 305:

53 Տե՛ս "Большая советская инциклопедия", т. 5, էջ 434:

54 Տե՛ս անդ, հտ. 26, էջ 419:

Էյնշտեյնն իր «Հարաբերականության ընդհանուր տեսությամբ» առաջ քաշեց հարաբերական ձգողության մասին տեսությունը, որում ուշադրություն էր դարձվում տարածություն-ժամանակի կորության վրա, մինչդեռ նյուտոնյան ֆիզիկայում ժամանակը եւ տարածությունն ուղիղ են դիտարկվում, եւ տարածության կամ ժամանակային կորությանը ոչ մի անդրադարձ չկա: Այդ իսկ պատճառով նյուտոնյան ֆիզիկայի կիրառումը հակասություններ էր առաջ բերել տիեզերաբանության մեջ[55]: Նյուտոնն անպատասխան էր թողել ձգողության բնույթի հարցը՝ չբացատրելով նաեւ ձգողության ակնթարթային տարածման ենթադրությունը, այսինքն՝ այն, որ մարմինների դիրքի փոփոխության հետ ակնթարթորեն փոխվում է նաեւ նրանց միջեւ ձգողության ուժը: Դրա հետ կապված դժվարությունները լուծվեցին Էյնշտեյնի ձգողության տեսության մեջ[56]: Եթե մարմինները դանդաղ են շարժվում լույսի արագության համեմատությամբ, ապա այդ դեպքում ճիշտ է Նյուտոնի տիեզերական ձգողության օրենքը, որով մատերիայի ցանկացած ձեւ փոխազդեցության մեջ է: Սակայն Էյնշտեյնի տեսությամբ ձգողությունը բնութագրվում է որպես մատերիայի ազդեցություն ժամանակի եւ տարածության հատկությունների վրա, եւ տարածություն-ժամանակի այդ հատկություններն իրենց հերթին ազդում են մարմինների շարժման եւ այլ ֆիզիկական օրենքների վրա: Էյնշտեյնի «Հարաբերականության ընդհանուր տեսության» մեջ տարածություն-ժամանակը հարթ չէ, այլ կորացված: Պարզվում է, որ ինչքան ուժեղ է ձգողության դաշտը, այնքան դանդաղ է հոսում ժամանակը՝ համեմատած այդ դաշտից դուրս գտնվողի ժամանակի հոսքի հետ[57]: Մաթեմատիկոս Հերման Մինկովսկու քառաչափ տարածություն-ժամանակի պատկերացումը մեծ նշանակություն ունեցավ Էյնշտեյնի «Հարաբերականության հատուկ տեսությունն» ավարտի հասցնելու համար: Մինկովսկու քառաչափ տարածությունը միավորում է ֆիզիկական եռաչափ տարածությունը եւ ժամանակը: Հարաբերականության հատուկ տեսությունից հետեւում է, որ տարածությունն ու ժամանակն անկախ չեն, այլ անցնելով հաշվարկի իներցիոն մի համակարգից մյուսին՝ տարածական կոորդինատները եւ ժամանակը ձեւափոխվում են միմյանց միջոցով[58]: Հետաքրքրական է, որ Նյուտոնն առաջ է քաշել նաեւ «բացարձակ ժամանակի» տեսակետը, որի համեմատությամբ լինում են մյուս փոփոխությունները[59]:

Գոյություն ունեն տարբեր երկրաչափություններ՝ ժամանակի եւ տարածության տարբեր ընկալումներով: Ն.Ք. երրորդ դարում Էվկլիդեսի ստեղծած Էվկլիդյան երկրաչափության հայացքները սերտորեն կապված են մեզ շրջապատող աշխարհի մասին այն ժամանակվա պատկերացումների հետ: Այդ երկրաչափության ուսուցումներից է այն, որ տարածությունը հարթ է, գծերն ուղիղ են, կետը գտնվում է մյուս երկու կետերի միջեւ: Սա այն է, ինչ մեզ ուսուցանում են դպրոցներում: Սակայն հետագա զարգացումները բերեցին ավելի վերացական երկրաչափության ըմբռնմանը: Էվկլիդյան երկրաչափությունը նկարագրում է մեզ շրջապատող տարածության համակարգը միայն որոշակի ճշտությամբ, գործածելի է երկրագնդի համեմատությամբ փոքր տարածքների չափման համար եւ

55 Տե՛ս անդ, հտ. 13, էջ 256:
56 Տե՛ս անդ, հտ.18, էջ 167:
57 Տե՛ս անդ, հտ.26, էջ 421-422:
58 Տե՛ս անդ, հտ.16, էջ 290:
59 Տե՛ս անդ, հտ.18, էջ 165:

կիրառելի չէ շատ մեծ տարածքների չափման, ինչպես նաև այնպիսի տարածության հատկությունների նկարագրման համար, որոնք կապված են լույսի արագությանը մոտ արագությամբ տեղաշարժվող մարմինների հետ[60]: Այլ է ռիմանյան երկրաչափությունը, որը կիրառեց Էյնշտեյնը «Հարաբերականության ընդհանուր տեսության» մեջ եւ հաղթական եղավ վերացական երկրաչափության համար: Այս երկրաչափությունների տարբերությունն այն է նաեւ, որ ըստ Էվկլիդյան երկրաչափության՝ զուգահեռ գծերն ուղիղ են ընթանում եւ չեն հատվում, իսկ ոչ էվկլիդյան երկրաչափության մեջ զուգահեռները կարող են հատվել[61]:

Այսպիսով, գիտության մեջ գոյություն ունեն հարթ եւ կոր ժամանակի եւ տարածության երկու պատկերացումներ: Երկրի պտույտը առանցքի շուրջը՝ աստղերի համեմատությամբ, որոշում է աստղային ժամանակը, որը գործածելը մարդկային կյանքում հարմար չէ, քանի որ չի համապատասխանում ցերեկվա եւ գիշերվա հերթափոխին: Դրա համար էլ օգտագործվում է արեւային ժամանակը[62]:

Ժամանակ եւ հաւիտենություն. Ժամանակի չգոյության մասին - Վերոնշյալ եկեղեցական, փիլիսոփայական, գիտական կարծիքները, ինչքան էլ տարբեր ոլորտների առնչվեն, ենթադրում են անկախ ժամանակի առկայություն: Սակայն պետք է նկատել, որ ժամանակ, իբրեւ այդպիսին, ընդհանրապես գոյություն չունի: Քսաներորդ դարի սկզբին Քեմբրիջի «Երրորդություն» քոլեջի փիլիսոփայության դասախոս Ջոն Մաքթագգրթը (John McTaggart) աշխատություն գրեց «Ժամանակի անիրական լինելու մասին» խորագրով[63]՝ անդրադառնալով ոչ թե ընդհանրապես ժամանակի անգոյությանը իբրեւ ինքնուրույն էություն, այլ՝ հեռավոր եւ մոտ անցյալների, ներկայի, մոտ եւ հեռավոր ապագայի, ինչպես նաեւ ավելի վաղ եւ ավելի ուշ պահերի ընկալման խնդիրներին:

Արտահայտված պատկերավոր տեսակետը, թե իրական ժամանակն այն է, որ կրծում է առարկաները եւ նրանց վրա թողնում իր ատամների հետքը[64], չի կարող հիմնավոր լինել: Ժամանակն ինչ-որ աներեւույթ բան չէ, որ կրծոտի իրերը, այլ իրերը փոխվելով՝ վերացական ժամանակի հասկացությունն են տալիս: Հետեւաբար, փոփոխությունն է ժամանակը, եւ իրերի փոփոխվելու հատկությունն է, որ ստեղծել է ժամանակի պատկերացումն ու պատրանքը: Այս իրողությանը գրեթե ուշադրություն չեն դարձրել կամ չեն շեշտել հին եւ նոր ժամանակների փիլիսոփաները: Բերգսոնը ակնարկներ ունի ժամանակի չգոյության, սակայն մտածողները նման տեսակետ չեն զարգացրել եւ շարունակել են ժամանակն իբրեւ ինքնուրույն նկատել: Ժամանակը եւ փոփոխությունն ու շարժումը միշտ միմյանցից անկախ բան են պատկերացրել, իբր առանձին կա ժամանակ եւ առանձին փոփոխություն կամ շարժում, որ տեղի է ունենում տարածության եւ գոյություն ունեցող ժամանակի մեջ: Այսպես նաեւ Օգոստինոսը համաձայն չէ, որ մարմնի շարժումը հենց ժամանակն է[65]: Սակայն եթե Օգոստինոսը որպես շարժում դիտարկեր նաեւ փոփոխությունը եւ այլափոխումը, նկատի ունենալով, որ մարմինը

60 Տե՛ս անդ, հտ.9, էջ 1:
61 Տե՛ս անդ, հտ. 22, էջ 116-117:
62 Տե՛ս անդ, հտ. 5, էջ 434:
63 "The Unreality of Time" (1908).
64 **Анри Бергсон,** Творческая эволюция, Материя и память, с. 60.
65 Տե՛ս **Օգոստինոս Երանելի**, նշվ. աշխ., էջ 232-233:

փոփոխվում, այլափոխվում է նաև արտաքին դադարի վիճակում, ապա գուցե բոլորովին այլ կլիներ նրա եզրահանգումը: Ըստ Բերգսոնի, երբ դրական գիտությունը խոսում է ժամանակի մասին, նկատի ունի ինչ-որ մարմնի շարժումը ըստ իր հետագծի: Գիտությունը վերցնում է այդ շարժումը որպես ժամանակի ներկայացուցչի[66]: Բերգսոնի բերած ժամանակային երկու ընկալումներից՝ ժամանակը որպես գիտություն եւ ժամանակը որպես ստեղծագործություն[67], վերջինի մեջ ժամանակի՝ փոփոխության հետ կապված լինելու անդրադարձներ կան: Երբ գտնվում ենք ժամանակի առջեւ, համոզվում ենք, որ այն նշանակում է ստեղծագործություն, եւ որ եթե ժամանակի մեջ տեւողությունը հատուկ է նաև քայքայման պրոցեսներին, ապա դա տեղի է ունենում նրա համար, որ դրանք համապատասխան են ստեղծագործությանը[68]: Բայց, օրինակ, մարդու պարագային ոչ թե ժամանակն է մեզ փոխում, այլ մենք ենք մանուկ հասակից դառնալով երիտասարդ, հասուն, ծեր, ստեղծում ժամանակի պատրանքը: Որոշ փիլիսոփաներ, շարժման եւ ժամանակի առնչությունների մասին խոսելով, ասել են, որ ոչ թե ժամանակն է որոշվում շարժումով, այլ ընդհակառակը՝ շարժումն է որոշվում ժամանակով[69]: Այս դեպքում եւս ճիշտ չի թվում բացատրությունը, որովհետեւ սրա հետ մեկտեղ չեն բացատրում, թե ինչպես է, որ գոյություն ունի ինքնուրույն ժամանակ: Այդպես էր մտածում նաեւ Պլատոնի ավանդույթները շարունակող, Ք.Հ. երրորդ դարի հույն փիլիսոփա Պլոտինը, ըստ որի՝ յուրաքանչյուր շարժում կարող է վերջանալ, մինչդեռ ժամանակն ընդհանրապես չի կարող ինչ-որ մի տեղ վերջանալ[70]: Ինքնուրույն մի ժամանակի գոյության առնչությամբ կասկածներ ունի նաեւ Օգոստինոսը, որ ասում է՝ մեզ սովորեցրել են եւ մենք էլ սովորեցրել ենք երեխաներին, որ կա երեք ժամանակ՝ անցյալ, ներկա, ապառնի, սակայն բացի ներկայից մյուս երկուսը գոյություն չունեն: Թե՞ նրանք էլ գոյություն ունեն, սակայն այն կերպ, որ ժամանակը ապառնիից դառնալով ներկա՝ գալիս է ինչ-որ գաղտնարանից, եւ ներկան անցյալ դառնալով՝ հեռանում է ինչ-որ գաղտնարան: Որտե՞ղ են տեսել ապառնի, որը դեռ գոյություն չունի, իսկ ինչը դեռ գոյություն չունի, հնարավոր չէ տեսնել: Հետեւաբար, թե՛ ապառնին եւ թե՛ անցյալը գոյություն չունեն[71]: Հակառակ ժամանակի անկախ գոյությունը ենթադրող տեսակետների՝ պետք է ասել, որ ոչ թե ժամանակ կա, եւ ամեն ինչ տեղի է ունենում, այլ քանի որ ամեն ինչ տեղի է ունենում, դրա համար էլ ժամանակ կա: Ժամանակը փոփոխության, շարժումնայնության արտահայտությունն է, իսկ տեւողությունը այդ փոփոխության ու շարժման հաջորդականության ժամանակային չափումն է: Սպինոզան ժամանակը սերտորեն առնչում է տեւողության հետ: Տվյալ առարկայի տեւողությունը որոշելու համար մենք այն համեմատում ենք այնպիսի առարկաների տեւողության հետ, որոնք ունեն կայուն եւ որոշակի շարժում, եւ այդ համեմատությունը կոչվում է ժամանակ: Դրա համար ժամանակը իրերի վիճակը չէ, այլ մտավոր լինելություն[72]: Ավելի ճիշտ կլիներ

66 Տես **Анри Бергсон**, նշվ. աշխ., էջ 375:

67 Տես անդ, էջ 380, 381, 385:

68 Տես անդ, էջ 382:

69 Տես **А. Ф. Лосев**, նշվ. աշխ., էջ 175:

70 Տես անդ, էջ 176:

71 Տես **Օգոստինոս Երանելի**, նշվ. աշխ., էջ 227:

72 **Бенедикт Спиноза**, (Приложение, содержащее метафизические мысли, в которых кратко объясняются более трудные вопросы, встречаемые как в общей, так и в специальной части метафизики, относительно сущего и его определений , Бога и его атрибутов, а также человеческой души), ст. 278.

ասել, որ ժամանակն իրերի վիճակը չէ, բայց միևնույն ժամանակ առաջ է գալիս այդ իրերի փոփոխությունից, կամ փոփոխվելու հատկությունից: Մենք ոչ թե տեսնում ենք ժամանակի սահելը, այլ փոփոխություններով, իրադարձությունների հաջորդականությամբ ենք որոշում ժամանակը: Կարելի է ասել, որ յուրաքանչյուր պահի մարմինը փոփոխվում է [73]: Սակայն ճշգրիտ կլինի նշել, որ ոչ թե յուրաքանչյուր պահի փոփոխվում է մարմինը, այլ մարմնի յուրաքանչյուր փոփոխությունը յուրաքանչյուր պահն է:

Բերգսոնի կարծիքը, թե յուրաքանչյուր ձև զբաղեցնում է ինչպես ժամանակ, այնպես էլ տարածություն[74], ինչպես նաև Շոպենհաուերի տեսակետը, թե շարժումը կազմված է միայն տարածության և ժամանակի միասնության մեջ[75], ճիշտ չեն: Այսպես նաև Սպինոզան համարում էր, որ տարածության և տևողության միջև տարբերությունը գոյություն ունի միայն մտքի մեջ, իրականում դրանց միջև տարբերություն չկա[76]: Սխալ է տարածությունը և ժամանակը դնել միևնույն հարթության վրա, ինչպես արել է նաև Էյնշտեյնը տարածություն-ժամանակ միասնական գործածումով, որովհետև տարածությունը գոյություն ունի, տեսանելի է և ոչ վերացական, մինչդեռ ժամանակի մասին չենք կարող նույնը ասել, այլ այն կախված է, ծագում է մարմինների փոփոխությունից: Տիեզերքի ֆիզիկայի մեջ նշվում է որ ժամանակի՝ t-ի շատ փոքր նշանակության դեպքում մոլեկուլներ կամ ատոմներ չէին կարող գոյություն ունենալ: Սակայն ոչ թե t-ի աննշան լինելու դեպքում ատոմներ ու մոլեկուլներ չեն լինում, այլ t-ն աննշան կլինի կամ t=0, երբ ատոմներ ու մոլեկուլներ չկան, որ իրենց շարժումային փոփոխությամբ ժամանակ առաջ բերեն: Գիտության մեջ նշվում է, որ ինչքան ուժեղ է ձգողության դաշտը, այնքան դանդաղ է հոսում ժամանակը՝ համեմատած այդ դաշտից դուրս գտնվողի ժամանակի հոսքի հետ: Բայց ձգողության հետ ժամանակի անմիջական առնչության հաստատումը լիովին ճշգրիտ չէ, որովհետև ժամանակ, որպես այդպիսին, ինքնին գոյություն չունի: Ձգողությունը կապ ունի ժամանակի հետ ոչ ուղղակորեն՝ միջնորդավորված ձևով, որովհետև ազդում է մարմինների շարժման կամ մարմինների փոփոխության վրա, որով և՝ ժամանակի վրա: Գիտության մեջ հատուկ բանաձևով հաշվում են ժամանակի հոսքը: Ճշգրիտ չէ ասել ժամանակի հոսք, այլ՝ փոփոխվող մարմինների փոփոխությունների արագության չափ: Նաև պետք է ոչ թե ասել, թե որքան մեծ է ձգողության դաշտը, այնքան դանդաղ է հոսում ժամանակը, այլ՝ որքան մեծ է ձգողության դաշտը, այնքան դանդաղ է շարժվում մարմինը և, հետևաբար, այնքան դանդաղ է լինում փոփոխությունը, որից էլ կախված է ժամանակը: Այսինքն՝ որքան դանդաղ փոփոխություն, այնքան դադաղ ժամանակ և ոչ թե հակառակը: Հարաբերականության հատուկ տեսությունից հետևում է, որ տարածությունն ու ժամանակն անկախ չեն և ձևափոխվում են միմյանց միջոցով: Սակայն ոչ թե միմյանց միջով ձևափոխվում են տարածությունն ու ժամանակը, այլ շարժումային փոփոխությունից փոխվում է նաև դրանից առաջացող ժամանակը: Գիտությունը հիմնականում նկատի ունի միայն իր սահմանումով արեւային ժամանակը, արեւի շուրջը պտույտով: Իրականում ժամանակի

73 Տես Анри Бергсон, նշվ. աշխ., էջ 335:

74 Տես անդ:

75 Классическая философская мысль, **Артур Шопенгауэр,** Мир как воля и представление, Минск, 1999, с. 89.

76 **Бенедикт Спиноза**, Избранные произведения, том первый, (Основы философии Декарта, доказанные геометрическим способом, перевод с латынского под ред. В. В. Соколова), Москва, 1957, с. 221.

չափումը փոփոխվող մարմինների փոփոխական ընթացքի չափումն է: Օգոստինոսը համաձայն չէ, որ արեւի, լուսնի եւ աստղերի շարժումը հենց ժամանակն է, քանի որ այդ դեպքում ինչո՞ւ չհամարել, որ բոլոր ֆիզիկական մարմինների շարժումն է ժամանակը: Եթե բոլոր լուսատուները կանգ առնեին, իսկ բրուտի անիվը շարունակեր պտտվել, ապա մի՞թե չէր լինի ժամանակ, որով չափենք նրա պտույտները[77]: Սակայն ժամանակը գոյություն չունի ըստ ինքյան: Մարդու համար ժամանակը եւ՛ իր մարմնի փոփոխությունն է, եւ՛ Երկրի փոփոխությունը՝ արեւի շուրջը պտույտով: Եւ հետեւաբար, սխալ է ժամանակը չափել միայն մոլորակների պտույտով, այլ դրա հետ մեկտեղ մարդու համար պետք է նշել նաեւ մարդուն, իրերին հատուկ փոփոխությունը:

Այսպիսով, ժամացույցները ոչ թե գործիքներ են, որ թվերով ցույց են տալիս անտեսանելի ժամանակը, այլ գործիքներ, որոնք ցույց են տալիս արեւի շուրջը Երկրի շարժումը կամ Երկրի դիրքի փոփոխությունը արեւի շուրջը՝ ըստ համապատասխան «ժամանակահատվածների»: Ժամացույցը կշեռքի պես ցույց է տալիս ժամանակը, որը կապված է իրերի հետ կամ դրանց հատկություններից մեկն է որպես շարժման եւ փոփոխության արդյունք: Ինչպես քաշ, ծանրություն չկա առանց իրերի, եւ դա կայանում է իրերում, եւ կշեռքը թվերով ցույց է տալիս այդ քաշը կամ ծանրությունը, այդպես էլ ժամացույցը թվերով ցույց է տալիս ժամանակը, որն առանձին գոյություն չունի, այլ կապված է իրերի փոփոխության եւ շարժման հետ: Ինչ-որ իմաստով կարելի է նմանեցնել ժամանակը եւ ձգողությունը. եթե փոփոխություն չկա, ժամանակ էլ չկա, եթե ծանրություն չկա, ձգողություն էլ չկա, ինչպես ժամանակն է ըստ փոփոխության, այնպես էլ ձգողությունը՝ ըստ ծանրության կամ ըստ զանգվածի:

Ժամանակի չգոյությունը կրոնական տեսակետով - Ծննդոց գրքի առաջին պարբերության բառերը՝ «Եւ եղավ երեկո, եւ եղավ առավոտ. օր առաջին» (Ա 5), ցույց են տալիս ժամանակի առաջացած լինելը շարժումային փոփոխությունից, որովհետեւ այդ օրը Արեգակը դեռ գոյություն չուներ, քանի որ ստեղծվել է արարչության չորրորդ օրը, որով եւ հնարավոր չէր արեւային ժամանակի գոյությունը: Չնայած որ կան նաեւ լուսնային, աստղային ժամանակներ, ըստ լուսնի կամ աստղերի համեմատությամբ Երկրի պտույտի, բայց այդպիսի ժամանակ էլ չէր կարող դիտարկվել Սուրբ Գրքի այս հատվածում, քանի որ դրանք եւս ստեղծվել են չորրորդ օրը (Ա 14-18):

Ժամանակը շարժումն է եւ փոփոխությունը եւ ինքին վերացական է, ինչպես բնությունը, որի կայանալը այսպես են բացատրում եկեղեցական հեղինակները: Երբ ասում ենք մարդ, այն ցույց է տալիս բնություն, բայց անորոշ է, ընդհանուր, իսկ երբ ասում ենք Պողոս, այն ժամանակ նշում ենք բնությունը՝ որպես իրականում գոյություն ունեցող այն օբյեկտի մեջ, որն արտահայտվում է այդ բառով[78]: Բնությունն ընդհանրական էություն է, որով կայանում է անձը: Բնությունը ներգործող է, իսկ անձը կրող, բնությունը որպես վերացյալ, իսկ անձը թանձրացյալ: Անձի վրա է կայանում բնությունը: Անձը բնության մասնավորողն է:

77 Տես **Օգոստինոս Երանելի**, նշվ. աշխ., էջ 231:

78 «The person of Jesus Christ in the decisions of the ecumenical councils», a historical and doctrinal study with the relevant documents referring to the Christological relations of the Western, Eastern and Oriental Churches, by Methodios G. Fouyas Ph. D. (Manchester), Hon. D. D. (Edinburgh) Greek Orthodox Archbishop of Aksum, Central Printing Press, Addis Ababa, 1976, p. 55.

Բնությունը ոչ ծնում է եւ ոչ էլ ծնվում, ոչ կրում է եւ ոչ էլ ենթակա է կրքերին, անձն է, որ գործում է, եւ բնությունն է, որով գործում է: Անձը առանց բնության չկա, որտեղ անձն է, այնտեղ եւ՝ բնությունը[79]: Այսպես էլ ժամանակը վերացական է եւ կայանում է շարժմամբ ու փոփոխություններով:

Մենք չենք կարող պատկերացնել արարչությունից առաջ ոչ մի ժամանակ եւ ոչ մի տեւողություն: Ժամանակը եւ տեւողությունը սկսեցին իրերի հետ: Ժամանակ չկար նշանակում է փոփոխություն, այլափոխում չկար: Ըստ Սպինոզայի՝ ով կենթադրի, որ տեւողությունը եւ ժամանակը նախորդել են արարված իրերին, նա ենթակա է այն սխալ տեսակետին, որ հատուկ է նրանց, ովքեր երեւակայում են տարածություն մատերիայից դուրս[80]: Պետք է ասել, որ մատերիալիզմը մեծ տեղ ունի քրիստոնեության մեջ ոչ միայն Աստծո նյութականացումով՝ մարմնացումով, այլեւ քրիստոնեության ուսուցանած հավիտենականությունը պետք է նկատել որպես մատերիալիստական հավիտենականություն:

Ճշգրիտ չէ նաեւ ժամանակի մեջ արտահայտությունը: Երբ ասում ենք, որ Քրիստոս մարմնացավ ժամանակի մեջ, պետք է նկատի ունենանք ոչ թե անկախ գոյություն ունեցող ժամանակի իշխանության տակ Քրիստոսի մտնելը, այլ փոփոխության ենթակա մարմնի կրումը եւ դրա փոփոխություններին ենթարկվելը նույն ժամանակաշրջանում գոյություն ունեցող մարդկանց, իրերի, բնության, առարկաների, կենդանիների փոփոխություններին զուգընթաց կամ միաժամանակ: Կարեւոր է իմանալ, որ Աստվածորդու՝ Քրիստոսի մարմնային փոփոխությունները չնայած «ժամանակի մեջ» էին ընթանում, զերծ էին մյուս բոլոր մարմիններին ու իրերին հատուկ քայքայման ու ապականության հատկություններից: Հետեւաբար, վերոնշյալ արտահայտությունը գործածվում է մարդկանց ավելի հասկանալի, պատկերավոր դարձնելու համար խոսքը: Այս իմաստով իրականությանը ճշգրտորեն չհամապատասխանող նման արտահայտություններ արեց նաեւ Քրիստոս: Քրիստոս ասաց, որ Իր երկրորդ գալուստը լինելու է արեւելքից (Մատթ. ԻԴ 27), գործածեց արեւելք եւ արեւմուտք բառերը (Մատթ. Ը 11, Ղուկ. ԺԳ 29), չնայած որ այդ բառերն ինքնըստինքյան չեն համապատասխանում իրականությանը: Արեւի մասին ասում են ծագել, մտնել, մայրամուտ եւ այլն, բայց իրականում ոչ թե Արեւն է ծագում կամ մտնում, այլ Երկիրն է նրա շուրջը պտտվում: Այդպես էլ ոչ թե ժամանակն է քայքայում իրերը, այլ փոփոխությունն է, որ ստեղծում է ժամանակը: *Արեւելք, արեւմուտք* բառերն առաջացել են այն ժամանակ, երբ մարդիկ կարծում էին, որ Երկիրը տափակ է, եւ արեւը՝ իբրեւ կլոր լուսատու, պտտվում է երկրի շուրջը: Այս պատկերացումը գոյություն ունեցավ մինչեւ ԺԶ դարը, երբ Կոպեռնիկոսը բացահայտեց, որ Երկիրն է պտտվում արեւի շուրջը: Հետեւաբար, արեւելք եւ արեւմուտք բառերը պիտի փոխվեին, բայց մնացին մարդկանց սովորույթների համաձայն, պատկերավոր, չնայած եւ սխալ պահելով հասկացությունը: Ահա այսպես էլ ժամանակի մեջ եւ նմանատիպ արտահայտություններ դեռ կշարունակեն գործածվել:

Ըստ Շոպենհաուերի՝ յուրաքանչյուր շարժում կամքի արտահայտություն է[81], սակայն ոչ յուրաքանչյուր փոփոխություն: Հետեւաբար, ժամանակը, թեկուզ եւ կայանում է մարդու,

79 Տե՛ս **Դավիթ Ճահկեցի**, Աստուածաբանական դրախտ ցանկալի, Երեւան, 2002, էջ 105:
80 **Бенедикт Спиноза**, (Приложение, содержащее метафизические мысли...), էջ 303:
81 Տե՛ս **Артур Шопенгауэр**, նշվ. աշխ., էջ 289:

աշխարհի վրա, սակայն կախված չէ կամքից, որով էլ ժամանակային տպավորությամբ փոփոխությունը անկախ է մարդու կամենալուց: Ժամանակների վախճանը մարդու փոփոխական գոյության վախճանն է, որ չի նշանակում շարժման բացակայություն, այլ փոփոխության՝ այլայլումի բացակայություն: Ընդ որում պետք է տարբերություն դնել շարժման եւ փոփոխության միջեւ, որովհետեւ փոփոխությունն իր մեջ նաեւ այլայլում է պարունակում, իսկ շարժումը՝ ոչ, չնայած որ փոփոխությունը եւս ինչ-որ իմաստով կարելի է շարժում անվանել: Հարաբերական պետք է նկատել նաեւ մարմնի դադարի վիճակը, քանի որ աշխարհում ամեն ինչ մշտական շարժման մեջ է, եւ դրանով է, որ առկա է ժամանակը: Առարկայի դադարի վիճակում գտնվելը կամ չշարժվելը դադար է միայն արտաքին դրսեւորումով, սակայն դրանում ընթացող ներքին պրոցեսները շարունակվում են: Օրինակ՝ դադարի մեջ գտնվող մարդը նույնիսկ առանց երբեւէ շարժվելու չի կարող նույնը մնալ, այլ կհասնի հասուն տարիքի, կծերանա: Սա նշանակում է, որ ոչ թե ժամանակը նրան ծերացրեց, այլ մարդու ներքին շարժման մեջ գտնվող մարմնի ընթացքը բերեց այս փոփոխությունները, որտեղից եւ ժամանակային հոսքի պատրանքը: Շարժումը, եթե փոփոխություն՝ այլայլում կամ ձեւափոխում չի ենթադրում, ժամանակ չի ծնում եւ կարող է գոյություն ունենալ հավիտենության մեջ: Անցավոր ժամանակն իբրեւ արդյունք ունեցող փոփոխությունը, որն իր մեջ ներառում է նաեւ այլայլում, քայքայում, առաջացել է մարդու անկման, մեղսագործության հետեւանքով: Գրիգոր Տաթեւացին նշում է, որ եթե մեղքը չլիներ, մարդը ո՛չ կմեռներ, ո՛չ կայլայվեր, ո՛չ կհիվանդանար, ո՛չ կծերանար եւ այլն[82]: Մարդուն վերաբերող այս իրողությունները վերաբերում են նաեւ իրերին, բույսերին, կենդանիներին, մոլորակներին՝ առաջացման, փոփոխման, մաշվելու, քայքայվելու եւ ոչնչանալու հատկություններով, ինչպես նաեւ, ըստ Տաթեւացու, առաքյալն է ասում, թե «մարմին ի ձեռն մեղաց մեռաւ»[83]:

Այսպիսի այլայլության փոփոխությունն առաջացել է որպես պատիժ մեղքի, որով ասվեց՝ «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը» (Ծնող. Գ 17, 18): Անկում ապրեց մարդը, նրա հետ նաեւ՝ ողջ տիեզերքը: Չնայած Քրիստոս մարմնացավ եւ ունեցավ մարմնի տարիքային աճում, բայց դա տարբեր էր այլայլության փոփոխությունից, որովհետեւ Քրիստոս մեղք չգործեց եւ մեղքի պատճառով փոփոխման ազդեցությունից դուրս էր[84]: Այս է վկայում նաեւ առաքյալը. «Հիսուս Քրիստոս նույնն է երեկ, այսօր եւ հավիտյան» (Եբր. ԺԳ 8):

Ժամանակի անդառնալիությունը - Ըստ Դեկարտի՝ ժամանակն ունի այնպիսի իրականություն, ինչպիսին շարժումը, եւ անցյալը, ներկան եւ ապագան պետք է ընդունել որպես տրված մեկ անգամ եւ ընդմիշտ[85]: Մենք գիտենք ժամանակը որպես ընթացք, որը չի կարող անցած լինել հակառակ կարգով կամ նորից կրկնվել[86]: Ճիշտ չէ այս ձեւակերպումը, քանի որ ոչ թե ժամանակը չի կարող ճշգրտությամբ կրկնվել, այլ՝ եղած իրադարձությունները:

---

82 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 480: Նաեւ՝ **Գրիգոր Տաթեւացի**, Ամարան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 226:

83 Սա հավանաբար իմաստային ազատ մեջբերում է առաքյալի խոսքից. «Զի թոշակն մեղաց՝ մահ» (Հռ. Զ 23):

84 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, էջ 480:

85 Տե՛ս **Анри Бергсон**, նշվ. աշխ., էջ 385: * Descartes, Principes, II 29.

86 Տե՛ս անդ, էջ 53:

Հետեւաբար, պետք է հստակորեն տարբերել իրադարձությունները, դրանց կրկնությունը եւ ժամանակը: Դեռեւս հնում աշխարհի պատմությունը դիտվում էր որպես փուլային ընթացք աշխարհի հավիտենության վերաբերյալ ուսմունքներում: Ստոյիկյանները նման ուսմունք փոխ էին առել Ասիայի կրոններից: Ինչպես տարին սկսվում է նորից, այդպես էլ հազարավոր տարիները դիտվում են որպես երկար ժամանակաշրջան, կազմում են Մեծ Տարի, որից հետո իրադարձությունների ընթացքը սկսվում է նորից[87]: Սրա նմանողությամբ Նիցշեն ստեղծեց հավիտենական վերադարձի մասին տեսությունը, համաձայն որի՝ ժամանակն իր անվերջանալի հոսքով որոշակի ժամանակաշրջաններում պետք է անխուսափելիորեն կրկնի իրերի նույն դրությունը: Հավիտենական վերադարձի մասին իր գաղափարները Նիցշեն արտահայտել է «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքում[88]: Ոչ թե ժամանակն է ազդում նյութական աշխարհի վրա, այլ նյութական աշխարհն է ծնում ժամանակը: Սա նշանակում է, որ գիտաֆանտաստիկ գրողների եւ կամ վերջին տասնամյակին նաեւ գիտնականների՝ ժամանակի մեջ ճամփորդությունների տեսությունները իրականության մեջ հնարավոր չէ իրագործել:

Ժամանակի մեջ ճամփորդությունը միայն ֆանտաստիկայի ժանրին էր վերաբերում, եւ ոչ ոք դրան գիտականորեն լուրջ ուշադրություն չէր դարձնում: Սակայն տասը տարիներ առաջ գիտական աշխարհում լուրջ փոփոխություններ նկատվեցին, եւ գիտնականները սկսեցին նաեւ գիտականորեն զբաղվել այս խնդրով, հավատալ ժամանակի մեջ ճամփորդությունների հնարավորությանը, երբ հայտնագործվեց որոշակի միջավայրում գերլույսային կամ լույսի արագությունից ավելի արագ շարժում: Ավելի ուշ հայտնաբերվեց որ դա տեսողական էֆեկտ է, բայց դեռ փայփայվում էր գաղափարը, որ էլեկտրամագնիսական ճառագայթման քվանտը (single photon)[89] կարող է գերազանցել լույսի արագությունը: 2011 թ. հուլիսի 25-ին «The Los Angeles Times»-ը հոդված հրապարակեց այն մասին, որ ֆիզիկոսներն ի վերջո կարողացել են հաշվարկել էլեկտրամագնիսական ճառագայթման քվանտի առավելագույն արագությունը: Հաշվարկները հանգեցրել են այն եզրակացության, որ քվանտը չի կարող շարժվել լույսի արագությունից ավելի արագ: Ֆիզիկոսները հայտարարել են, որ ժամանակի մեջ ճամփորդությունը հնարավոր չէ ոչ թե այն պատճառով, որ դա քիչ հավանական է եւ կամ դեռեւս չունենք համապատասխան տեխնոլոգիաներ, այլ այն պատճառով, որ դա պարզապես հակասում է տիեզերքի ֆիզիկական օրենքներին: Դեռ նշյալ հրապարակումից առաջ՝ 2011 թ. հուլիսի 19-ին, Հոնկոնգի Գիտության եւ տեխնոլոգիայի համալսարանը (Hong Kong University of Science and Technology - HKUST) իր պաշտոնական կայքէջում[90] մանրամասնորեն տեղեկություն էր հրապարակել այս հետազոտությունների մասին: Հոնկոնգի հիշյալ համալսարանի Ֆիզիկայի ամբիոնի դասախոս, պրոֆեսոր Շեւան Դուն (Shengwang Du) իր գործակիցների հետ այս հետազոտական փորձարկումները կատարելով՝ վերահաստատել է Էյնշտեյնի տեսությունը, որ ոչինչ չի կարող ճանապարհորդել կամ շարժվել լույսից ավելի արագ, քանի որ Էյնշտեյնը պնդում էր, որ լույսի արագությունը

87 Տե՛ս «Petit Encyclopædie Philosophique», էջ 109:

88 Տե՛ս «История философии», Энциклопедия, Минск, 2002, էջ 172:

89 Ֆիզիկայում ֆոտոնը էլեկտրամագնիսական փոխազդեցության եւ ճառագայթման քվանտն է, լույսի հիմնական տարրը:

90 www.ust.hk/eng/index.htm

փիեզերքի շարժման օրենքն է: Գիտնականը նշել է, որ ինքն անձամբ հիասթափված է իր հետազոտության նման տիտուր արդյունքից: Գիտության մեջ այսպիսի տեսություններն առաջ են քաշվել, որովհետև շարունակում են ժամանակը դիտել որպես անկախ գոյություն ունեցող երևույթ, փոխանակ այն համարելու շարժումային փոփոխության, այլայլության արդյունք: Եւ քանի որ ոչ թե ժամանակը չի կարող ճշգրտությամբ կրկնվել, այլ՝ եղած փոփոխությունները, իրադարձությունները, ապա ժամանակի մեջ ճամփորդություն հնարավոր չէ իրականացնել: Այսպիսով, ժամանակի մեջ ճամփորդությունը, որ կապվում էր քվանտի գերլույսային արագության հետ, անիրական համարվեց: Սակայն սեպտեմբերի 22-ին հայտնի BBC եւ CNN հեռուստաընկերությունները հայտնեցին գիտնականների նոր հայտնագործության մասին, ըստ որի՝ գիտական փորձով հաստատվել է, որ ենթաատոմային մասնիկները՝ նեյտրինոները լույսի արագությունից վաթսուն նանովայրկյան ավելի արագ են շարժվում: Եթե այս հաստատումը վերջնականապես ապացուցվի, ապա ֆիզիկայի մեջ նոր մոտեցումներ եւ պատկերացումներ պիտի որդեգրվեն, պիտի փոխվի այն հիմնական տեսակետը, թե ոչինչ չի կարող լույսից ավելի արագ շարժվել: Էյնշտեյնը նշում է, որ լույսի արագությամբ շարժվելու դեպքում ժամանակը մեծապես դանդաղում է: Իսկ արագության այդ սահմանն ընդհանրապես գերազանցելու դեպքում, նշանակում է, ժամանակը կարող է դադարել գոյություն ունենալուց: Ամեն ինչ, գոյություն ունեցող ամեն բան եւ նույնիսկ հավիտենությունը ենթարկվում են որոշակի օրենքների, քանի որ առանց օրենքների, նախապայմանների գոյություն ունեցող որեւէ բան չի կարող գոյություն ունենալ: Եւ քանի որ նաեւ լույսի արագությունից ավելի այն կողմ ենք ենթադրում ժամանակային իրողության սահմանի վերջը, ապա պիտի որ գոյություն ունենային օրենքներ, ըստ որոնց հնարավոր կլինի մուտք գործել հավիտենություն: Իսկ ի՞նչ կլինի, եթե անցնենք լույսի արագությունից անհամեմատ ավելի հեռու, այն կողմ: Սպինոզան հատկանշական օրինակ է բերում: Երկու անիվների պտույտի ընթացքում ավելի արագ պտտվող անիվի վրա նշված կետը ավելի շուտ կհասնի իր ելման դրություն, քան ավելի դանդաղ պտտվողի վրա նշված կետը: Եւ եթե անիվի արագությունը մեծացնենք մինչեւ անվերջություն, ապա իր տեղը կետի վերադառնալու ժամանակը կփոքրանա մինչեւ մեկ ակնթարթ: Այդ ժամանակ շրջանի վրա գտնվող կետը այդքան մեծ արագության դեպքում բոլոր ակնթարթներում կլինի նույն տեղում, եւ այն ինչ ակնհայտ է մի կետի համար, ակնհայտ է նաեւ այդ անիվի բոլոր կետերի համար: Դրա համար էլ այդքան մեծ արագության դեպքում բոլոր կետերը մնում են, ներկա են նույն տեղում[91]: Այսպիսով, տեսականորեն կարելի է ենթադրել, որ լույսի արագությունից այն կողմ անցնելու դեպքում ժամանակը դադարում է, եւ սկսվում է ներկայություն անժամանակ գոյության մեջ:

Հավիտենություն եւ ժամանակ-Պլատոնն իր հիասքանչ լեզվով ասում է, որ Աստված ի վիճակի չլինելով փիեզերքը հավիտենական դարձնել[92], նրան տվեց ժամանակ, որը հավիտենության շարժվող պատկերն է[93]: Հույների համար հավիտենականը հավասար էր անդրժամանակյայի (trans-temporel), այսինքն՝ հավիտենությունը նրանց համար ժամանակի

91 Տես **Бенедикт Спиноза**, Основы философии Декарта, доказанные геометрическим способом, էջ 230-231:
92 Քանի որ, ըստ Պլատոնի, արարված իրերին հնարավոր չէ լիովին վերագրել հավիտենությունը:
93 Տես **Анри Бергсон**, նշվ. աշխ., էջ 353: *Plato, "Timeos" 3d.

պարզ ժխտում է: Ժամանակը դիալեկտիկորեն վերածվում է հավիտենական դադարի: Նաեւ Օգոստինոսն է ասում, որ եթե ներկան միշտ ներկա լիներ եւ չանցներ դեպի անցյալ, այն չէր լինի ժամանակ, այլ՝ հավիտենություն[94]: Սակայն իրականում հավիտենությունը ոչ թե ժամանակի ժխտում է, այլ փոփոխությունների, այլայլության ժխտում: Հավիտենությունը եւ ժամանակը չեն կարող բացատրվել մեկը մյուսով, որովհետեւ հավիտենությունը ժամանակի անվերջանալի ընթացքը չէ, քանի որ ժամանակն այդպես ընթանում է հազարամյակներ շարունակ եւ դրանով իսկ հավակնություն ունի հավիտենականության հատկանիշներ ձեռք բերելու, եթե ոչ հավիտենություն դառնալու, որի մեջ մարդիկ եւ իրերը անցնում, գնում են: Բայց քանի որ ժամանակ գոյություն չունի կամ այն նյութական աշխարհի փոփոխությունների շարունակական արդյունք է, հետեւաբար, հավիտենությունը մեկ այլ իրականություն է, որտեղ այդպիսի փոփոխությունները մարդուն անցողիկ կամ մահկանացու չեն դարձնում:

Հավիտենությունը չի նշանակում, որ դրա մեջ չի լինի դեպքերի հաջորդականություն կամ հիշողություն: Հիշողությունը վերաբերում է անցյալին, իսկ անցյալն այս աշխարհում կապ ունի փոփոխությունների փուլերի հետ, որոնք ընկալվում են որպես ժամանակ: Սակայն ենթադրելի է, որ հավիտենության մեջ կլինի դեպքերի հաջորդականություն, եւ հիշողությունը կվերաբերի ոչ թե անցյալին այն իմաստով, որ հասկանում ենք այժմ, այլ կվերաբերի հաջորդականությանը: Այսպես նաեւ առաքյալի նշած երեք առաքինություններից (Ա Կորնթ. ԺԳ 13) հավիտենականի մեջ հավատքն ու հույսը վերանալու են, մնալու է միայն սերը: Հավատում ենք չտեսնված բաներին, բայց հավիտենության մեջ հավատքը վերածվելու է տեսության (Բ Կորնթ. Գ 18): Հույս ենք տածում փափագելի իրողությունների հանդեպ, եւ հույսն էլ հավիտենության մեջ կվերածվի տիրապետության (Հռ. Ը 24): Սակայն սերը մնալու է, որովհետեւ այն ստվածային է, պատկանում է Աստծո էությանը: Աստծո մասին չենք կարող ասել, թե Նա հուսում է կամ հավատում, այլ սիրում է[95]:

Հավիտենությունը, ի տարբերություն ժամանակի, առանձին գոյություն ունի եւ ոչ թե փոփոխություններից կամ դրանց բացակայություններից է կախված: Դրա համար էլ հնարավոր է մարդու գոյությունը հավիտենականի կամ հավերժության մեջ: Տեղությունը առանց արարված իրերի եւ հավիտենությունն առանց Աստծո ոչ մի ձեւով չեն կարող հասկացված լինել: Մեր փոփոխականությունն ու անցողիկությունն է, որ արտահայտվում է ժամանակի տեսքով, իսկ հավիտենությունը բիում է անսահման Աստծուց եւ տարածվում է որպես մարդուց վեր եղող իրողություն, որի մեջ մարդը կարող է մտնել եւ հարատեւել առանց փոփոխությունների: Ճիշտ չէ հավիտենությունը շփոթել տեղության հետ[96]:

Եկեղեցական հեղինակները նշում են, որ Աստված է ժամանակների արարիչը[97]: Բայց սա կարելի է Աստծուն վերագրել անուղղակի կերպով, քանի որ Աստված ստեղծեց նյութական աշխարհը եւ մարդկանց, որոնց փոփոխություններից էլ ելնում է ժամանակը: Սպինոզան ասում է՝ միայն Աստծուն է հատուկ անվերջանալիություն[98], իսկ Տաթեւացին նշում

94 Տե՛ս **Օգոստինոս Երանելի**, նշվ. աշխ., էջ 224:

95 Տե՛ս "Толковая Библія или комментарій на все книги Св. Писанія Ветхаго и Новаго Завета", 3, съ иллюстрациями, издание преемников А.П. Лопухина, том одиннадцатый, Петербургъ, 1913, էջ 103:

96 Տե՛ս **Бенедикт Спиноза**, (Приложение, содержащее метафизические мысли), էջ 305, 307:

97 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, էջ 114, 115: **Օգոստինոս Երանելի,** նշվ. աշխ., էջ 223, 224:

98 Տե՛ս **Бенедикт Спиноза**, նշվ. աշխ., էջ 287:

է մշտնջենավորությունը՝ սկիզբ, սակայն վերջ չունեցող իրողությունները, այսինքն՝ Աստծո կողմից արարված եւ Նրանից անվերջանալիության հատկությունը ստացած արարածներին՝ հրեշտակներ, հոգիներ: Աստված զերիվեր է հավիտենից խոսքերով Տաթեւացին նշում է, որ հավիտենությունը մի բան չէ, որ գալիս է դեպի Աստված, այլ այն Աստծուց է, նաեւ ասում է. «Աստուած արարիչ է յաւիտենից»[99]: Սպինոզան էլ ասում է, որ սխալ է պատկերացնել հավիտենությունը Աստծուց դուրս[100]: Այս կարծիքների համադրությունը ցույց է տալիս, որ արարվածների անվերջանալիությունը, կամ հավիտենական լինելու հատկությունը տրվում է Արարչից: Եւ Քրիստոսի խոսքը՝ «Ինչպէս Դու, Հա՛յր, Իմ մեջ, եւ Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն» (Յովհ. ԺԷ 21), նշանակում է նաեւ հավիտենության մեջ լինելը: Աստված ինքնակյանք է, որովհետեւ կյանքն Ինքն Իրենից ունի[101]: Նույնպես եւ Աստված ինքնահավիտյան է, որովհետեւ Իր հավիտենությունն Ինքն Իրենից ունի եւ տալիս է ուրիշներին: «Իսկ հրեշտակք յայլմէ ունին. այսինքն յԱստուծոյ»,- հաստատում է Սուրբ Գրիգոր Տաթեւացին: Նաեւ առաքյալն է ասում. «Այլ շնորհք Աստուծոյ, կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռ. Զ 23): Հայտնության գրքի մեջ ակնարկ կա երկրային ժամանակի վերջանալու, որ լինում է Արեւի շուրջը Երկրի պտույտից եւ նոր իրականության մեջ՝ նոր երկնքում եւ նոր երկրում, Աստծո կողմից հավիտենությունը ստանալու: «Եւ քաղաքին պէտք չէին արեգակ ու լուսին, որպեսզի լուսավորեն այն. քանզի Աստծո փառքն էր լուսավորում քաղաքը ամեն ժամ, եւ Գառը ճրագ էր նրա մեջ: Եւ ազգերը ընթանում էին Նրա լույսով, ու երկրի թագավորները լույս էին հագնում նրա փառքից» (Յայտն. ԻԱ 23-24):

Ժամանակավոր կյանքի հետ հանդես է գալիս ժամանակը, իսկ հավիտենական կյանքի հետ՝ հավիտենությունը: Ժամանակը ծագում է իրերի, մարդու փոփոխություններից, եւ դրա մեջ գոյություն ունի մարդը, հավիտենությունը գալիս է Աստծուց, եւ դրա մեջ հարատեւում է մարդը: Հավիտենությունը ո՛չ ժամանակի երկարաձգումն է, ո՛չ էլ ժամանակի այլափոխումը: Ժամանակը nunc volans է, իսկ հավիտենությունը nunc stans, այսինքն՝ ժամանակը թռչող, անցնող ներկա է, հավիտենությունը՝ հաստատուն մնացող ներկա[102]:

Պողոս առաքյալը, երկնային իրողությունների մասին խոսելով, ասում է. «Այժմ տեսնում ենք աղոտ, ինչպես պատկերը հայելու մեջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դեմառդեմ» (Ա Կորնթ. ԺԳ.12): Ահա այսպես էլ հավիտենության մեջ միայն հնարավոր կլինի լիովին բացահայտել հավիտենության գաղտնիքները:

---

99 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք Հարցմանց, էջ 114:

100 Տե՛ս **Бенедикт Спиноза**, նշվ. աշխ., 285:

101 **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք Հարցմանց, էջ 117:

102 "Theological outlines", by the Rev. Francis J. Hall, S.T.D., late professor of Dogmatic theology in the General Theological Seminary, New York City. Revised by the Rev. Frank Hudson Hallock, S.T.D., professor of Old Testament and Semitic languages and acting professor of Dogmatic theology, Nashotah House, Nashotah, Wisconsin, London, Society for promoting Christian knowledge, Northumberland avenue, W.C.2, 1934, p. 79. *Wilhelm and Scannell, Manual, vol. I, pp. 195-197.